

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

2 դեկտեմբերի 2008թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

- 1) Սույն կարգով սահմանվում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՄԱ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բորսա) կողմից արտակարգ իրավիճակներում իրականացվող գործողությունները, դրանց հաջորդականությունը և պատասխանատու անձանց պարտականությունները:
- 2) Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 3) «**Արտակարգ իրավիճակ**». ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ առաջացած իրավիճակն է, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել Բորսայի բնականոն գործունեությանը և պատճառել վնասներ: Արտակարգ իրավիճակների օրինակներ են բնական աղետները, հրդեհը, ավազակային հարձակումները, սպասարկող ենթակառուցվածքների խափանումը, ծրագրային և տեխնիկական միջոցների խափանումը, բորսայական առևտրի սպասարկման համար օգտագործվող ցանցի խափանումը, գաղտնի տեղեկատվության հրապարակման հետևանքով Բորսային պատճառված վնասները և այլ իրավիճակներ, որոնք կարող են խոչընդոտել Բորսայի ընթացիկ գործունեությանը:
- 4) «**Արտակարգ իրավիճակներում գործող խումբ**». Բորսայի տնօրենի կողմից նշանակվող և տնօրենի կողմից ղեկավարվող խումբ, որը գործում է արտակարգ իրավիճակների ժամանակ՝ ընդունելով արտակարգ իրավիճակում գործելու որոշումներ:
- 5) «**Առևտրային համակարգ**». էլեկտրոնային եղանակով բորսայական առևտրի կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև Բորսայի առևտրի կանոններով սահմանված այլ գործառնությունների իրականացման համար Բորսայում օգտագործվող տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների համախումբ:
- 6) «**Բորսայի առևտրի կանոններ**». Բորսայի կողմից մշակված կանոններ, որոնք սահմանում են Բորսայում իրականացվող առևտրի կազմակերպման և իրականացման գործընթացը:
- 7) «**Ծայրահեղ իրավիճակ**». արտակարգ իրավիճակի շարունակվելու հետևանքով առաջացած իրավիճակ, որը կրում է առավել երկարտև ու ծանր բնույթ և մեծ մասշտաբներ:
- 8) Սույն կարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Արտակարգ իրավիճակներում գործողությունների կարգի գործողության շրջանակները

- 1) Սույն կարգը գործում է աշխատանքային ժամերի ընթացքում Բորսայում առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում:
- 2) Աշխատանքային ժամերից դուրս առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում հատուկ գործողություններ կատարվում են միայն այն դեպքում, երբ այդ արտակարգ իրավիճակները անմիջականորեն սպառնում են Բորսայի գործունեությանը, կարող են երկարատև լինել և շարունակվել հաջորդող աշխատանքային ժամերի ընթացքում:

Գլուխ 3. Արտակարգ իրավիճակներում գործող հատուկ խմբի ստեղծումը

- 1) Արտակարգ իրավիճակների ի հայտ գալու ժամանակ Բորսայի տնօրենի հրամանով ստեղծվում է Արտակարգ իրավիճակներում գործող հատուկ խումբ (այսուհետ՝ Խումբ):
- 2) Բորսայի տնօրենը հանդիսանում է Խմբի ղեկավարը և իր հրամանով նշանակում է Խմբի անդամներին, որոնց կազմում պետք է ընդգրկված լինեն Բորսայի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, անվտանգության աշխատակիցը, իսկ նման աշխատակցի բացակայության դեպքում նման պարտականություններ կատարող այլ աշխատակից, ինչպես նաև Բորսայի տնօրենի որոշմամբ այլ անձինք:

- 3) Խումբն արտակարգ իրավիճակների ժամանակ առաջնորդվում է Բորսայի «Գործունեության շարունակականության ապահովման քաղաքականությամբ» սահմանված հիմնական սկզբունքներով և սույն կարգում նշված գործողությունների հաջորդականությամբ:
- 4) Խումբը գործում է արտակարգ իրավիճակի ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կարող է շարունակել գործունեությունը արտակարգ իրավիճակի վերացումից հետո՝ վերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Գլուխ 4. Արտակարգ իրավիճակներում իրականացվող գործողությունների հաջորդականությունը

- 1) Արտակարգ իրավիճակի ի հայտ գալուց անմիջապես հետո յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է դրա մասին տեղյակ պահել իր անմիջական ղեկավարին և Բորսայի տնօրենին:
- 2) Տեղեկանալով ստեղծված իրավիճակի մասին՝ Բորսայի տնօրենի հրամանով ստեղծվում է Խումբը և գնահատում ստեղծված իրավիճակը:
- 3) Գնահատման արդյունքում պետք է բացահայտվեն արտակարգ իրավիճակի սկզբնաղբյուրները և պատճառները (բացառությամբ բնական աղետների և անհատթահարելի ուժերի կողմից առաջացած արտակարգ իրավիճակների դեպքում):
- 4) Կախված իրավիճակի բնույթից և գնահատման արդյունքներից, ինչպես նաև այն լուծելու ժամանակային հնարավորություններից՝ Խմբի ղեկավարի կողմից ընդունվում են որոշումներ և տրվում ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հնահանգներ հետագա գործողությունների վերաբերյալ:
- 5) Բնական աղետների, անհատթահարելի ուժերի, հրդեհի կամ այլ մեծ մասշտաբների հասնող իրավիճակների ժամանակ, երբ հնարավոր չէ ապահովել Բորսայի բնականոն գործունեությունը, Խմբի ղեկավարը կայացնում է Բորսայի գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ որոշում և այդ մասին հնարավոր սեղմ ժամկետում տեղեկացնում է շուկայի մասնակիցներին ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին և կազմակերպվում են Բորսայի աշխատակիցների, ինչպես նաև Բորսայի տարածքում գտնվող այլ անձանց էվակուացում և առավել ապահով տեղ տեղափոխում, ինչպես նաև առաջնային կարևորություն ունեցող էլեկտրոնային տվյալների պահեստային կրկնօրինակների և հնարավորության դեպքում Բորսայի հետագա բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ այլ իրերի առավել ապահով տեղ տեղափոխում:
- 6) Սույն գլխի 5) կետում նշված գործողություններին զուգահեռ հրդեհի, տեխնիկական վթարի կամ այլ բնական աղետների ժամանակ Բորսայի անվտանգության աշխատակիցը, մնան պարտականություններ կատարող այլ աշխատակից կամ Խմբի ղեկավարի կողմից նշանակված այլ անձ անհապաղ կանչում է հրշեջ խմբին կամ համապատասխան վթարային ծառայությանը և մինևույն ժամանակ հնարավորության դեպքում պարտավորվում է կազմակերպել Բորսայի տիրապետման ներքո գտվող հակահրդեհային սարքավորումների օգտագործումը: Հրշեջ կամ փրկարար աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում Խմբի ղեկավարը թույլատրում է համապատասխան ծառայությունների աշխատակիցների մուտքը Բորսայի տարածք, այդ թվում՝ առևտրի սրահ:
- 7) Հատկապես մեծ մասշտաբների հասնող արտակարգ իրավիճակների դեպքում, երբ վտանգ է սպառնում Բորսայի աշխատակիցների կյանքին և առողջությանը, Խումբն իր գործողությունների իրականացման ընթացքում առաջնորդվում է Բորսայի աշխատակիցների կյանքի և առողջության անվտանգության ապահովման առաջնայնության սկզբունքով:
- 8) Եթե արտակարգ իրավիճակը կրում է տեղային բնույթ, ապա Խմբի կողմից կազմակերպվում է անվտանգության ապահովում այն մասում, որտեղ ի հայտ է եկել արտակարգ իրավիճակը: Այս դեպքում արտակարգ իրավիճակի պատճառած վնասներից Բորսայի գույքը, տեխնիկական ապահովման համակարգերը, էլեկտրոնային տվյալների պահեստային կրկնօրինակները և այլ կարևոր ակտիվները պաշտպանելու և անվտանգ վայր տեղափոխելու գործում կարող են մասնակցել նաև Բորսայի այն աշխատակիցները, ովքեր Խմբի ղեկավարի կողմից կլիազորվեն մնան աշխատանք կատարելու:

- 9) Արտակարգ իրավիճակների դեպքում հատուկ շինությունների և չիրկիզվող պահարանների բացման և դրանցից փաստաթղթերի, տեղեկությունների, գույքի և այլ ակտիվների դուրս բերման և առավել ապահով վայր տեղափոխման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրվում է Խմբի ղեկավարի և առնվազն երկու անդամների կողմից:
- 10) Էլեկտրաէներգիայի խափանման հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակից խուսափելու համար Բորսան պետք է ապահովված լինի էլեկտրասնուցման տարբեր աղբյուրներով (որոնցից մեկը պետք է լինի պահուստային) և/կամ տեղային էլեկտրասնուցման աղբյուրներով՝ գեներատորներ, մարտկոցներ, որոնք պետք է ապահովեն Բորսայի անխափան բնականոն գործունեությունը:
- 11) Էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրի խափանման դեպքում անմիջապես անցում է կատարվում էլեկտրասնուցման պահուստային աղբյուրին, կամ ավտոմատ կերպով միանում են էլեկտրասնուցման տեղային աղբյուրները: Էլեկտրասնուցման տեղային աղբյուրների օգտագործման դեպքում պարտադիր կերպով պետք է պահպանվեն նման սարքավորումների տեխնիկական օգտագործման անվտանգության կանոնները:
- 12) Այնպիսի արտակարգ իրավիճակում, երբ անաշխատունակ են դառնում Բորսայի այն աշխատակիցները, ովքեր ապահովում են Բորսայի հիմնական ընթացիկ գործառնությունների իրականացումը (բորսայական առևտրի կազմակերպում, քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացում), Բորսայի տնօրենի կարգադրությամբ այդ աշխատակիցների աշխատանքային պարտականությունները դրվում են այլ աշխատակցի(ների) վրա:
- 13) Այլ տիպի արտակարգ իրավիճակների դեպքում Խումբն իրավունք ունի գործելու ըստ իրավիճակի ընթացիկ գնահատման՝ պահպանելով սույն կարգի հիմնական սկզբունքները:
- 14) Արտակարգ իրավիճակի ավարտից հետո Խումբը կազմում է համապատասխան արձանագրություն իրականացված միջոցառումների և գործողությունների վերաբերյալ, որը ստորագրվում է Խմբի բոլոր անդամների և հաստատվում է Խմբի ղեկավարի կողմից:
- 15) Արտակարգ իրավիճակներում առավել համակարգված և արագ գործունեության համար Բորսայի տնօրենի կողմից կարող են ընդունվել արտակարգ իրավիճակում գործելու այլ հատուկ ընթացակարգեր և ծրագրեր:

Գլուխ 5. Առևտրային համակարգի և բորսայական առևտրի կազմակերպման հետ կապված արտակարգ իրավիճակներում գործողությունների կարգ

- 1) Առևտրային համակարգի հետ կապված ցանկացած տեխնիկական և ֆունկցիոնալ խափանումների, ինչպես նաև բորսայական առևտրին խոչընդոտող ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում առևտրային համակարգի ադմինիստրատորը պարտավոր է անմիջապես տեղեկացնել համապատասխան ստորաբաժանման ղեկավարին և Բորսայի տնօրենին:
- 2) Տեղեկանալով իրավիճակին՝ Բորսայի տնօրենը առևտրային համակարգի ադմինիստրատորի ներկայացրած խնդիրների հիման վրա գնահատում է ներկա իրավիճակն ու դրա հետևանքները և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է Խմբի աշխատանքները:
- 3) Առևտրային համակարգի հետ կապված տեխնիկական և ծրագրային խնդիրների առաջացման դեպքում առևտրային համակարգի ադմինիստրատորի կամ նման խնդրի հետ կապված այլ աշխատակցի կողմից Խմբին ներկայացվում է առաջացած խնդիրների պատճառները և դրանց լուծման տարբերակները:
- 4) Ստացված տեղեկությունների հիման վրա Բորսայի տնօրենը գնահատում է առաջացած խնդիրների լուծման ժամականահատվածը և Բորսայի առևտրի կանոններով սահմանված կարգով հայտարարվում է առևտրային նստաշրջանի սկզբի հետաձգում, եթե խնդիրներն առաջացել են առևտրային նստաշրջանի բացվելուց առաջ, կամ տեխնիկական ընդմիջում, եթե խնդիրներն առաջացել են առևտրային նստաշրջանի ընթացքում:
- 5) Առևտրային նստաշրջանի դադարեցումը կատարվում է Բորսայի առևտրի կանոններով սահմանված կարգով:
- 6) Բորսայական առևտուրը սպասարկող սերվերների և այլ համակարգիչների ֆիզիկական վնասի, խափանման կամ անաշխատունակության դեպքում Բորսայի համապատասխան աշխատակցի կողմից կատարվում է դրանց փոխարինում պահուստային սերվերներով և համակարգիչներով,

որոնք նախօրոք պետք է գտնվեն աշխատունակ վիճակում՝ նման իրավիճակներում արագ կերպով գործելու համար:

- 7) Պահուստային սարքավորումների գործարկման ընթացքում պետք է ապահովվեն հիմնական սարքավորումների աշխատունակության վերականգնումը, իսկ ֆիզիկական այնպիսի վնասի դեպքում, երբ այդպիսի վերականգնումը հնարավոր չէ, պետք է ապահովվեն նման սարքավորումների շտապ ձեռք բերումը կամ վարձակալումը:
- 8) Բորսայում ներքին ցանցի խափանումների ժամանակ համապատասխան աշխատակցի կողմից կատարվում է անցում պահուստային ցանցին: Վերջինիս գործարկման ժամանակահատվածում պետք է կատարվեն համապատասխան աշխատանքներ հիմնական ցանցի վերականգնման ուղղությամբ և այն վերականգնելուց հետո պետք է անցում կատարել պահուստայինից հիմնական ցանցին:
- 9) Բորսայում առևտրային համակարգի հետ առաջացած ծրագրային խափանումների դեպքում սույն գլխի 3) - 5) կետերի համաձայն կատարվում են համապատասխան գործողություններ և այդ ընթացքում Բորսայի համապատասխան աշխատակցի կողմից տարվում են աշխատանքներ ծրագրային խափանումները վերացնելու ուղղությամբ:

Գլուխ 6. Ծայրահեղ իրավիճակներում իրականացվող գործողությունների հաջորդականությունը

- 1) Ծայրահեղ իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ ամբողջովին վնասվում են Բորսայի շենքը, սարքավորումները (ինչպես հիմնական, այնպես էլ պահուստային), նշանակալի վնաս են կրում հիմնական ծրագրային ապահովման միջոցները, դրանց կրկնօրինակները, էլեկտրոնային բազաների բնօրինակները և կրկնօրինակները, ամբողջովին կամ մեծամասամբ բացակայում կամ անաշխատունակ են դառնում Բորսայի առանցքային աշխատակիցները և այլ դեպքերում:
- 2) Ծայրահեղ իրավիճակի ժամանակ Բորսայի գործունեությունը կարող է խաթարվել երկար ժամանակահատվածով:
- 3) Ծայրահեղ իրավիճակի առաջացման ժամանակ Խմբի կազմում անհրաժեշտության դեպքում կարող են ներգրավվել նաև Բորսայի դիտորդ խորհրդի անդամները:
- 4) Ծայրահեղ իրավիճակներում Բորսայի յուրաքանչյուր աշխատակից ղեկավարվում և ուղղորդվում է ծայրահեղ իրավիճակներում գործող Խմբի որոշումներով:
- 5) Ծայրահեղ իրավիճակի գնահատման և դրա լուծման ժամանակահատվածի պարզաբանումից հետո Խումբը կազմում է գործողությունների ծրագիր և դրա մասին տեղեկացնում է Բորսայի աշխատակիցներին և անհրաժեշտության դեպքում այլ անձանց ու հասարակությանը:

Գլուխ 7. Վերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը

- 1) Բորսայում արտակարգ իրավիճակի, ինչպես նաև ծայրահեղ իրավիճակի ավարտից հետո Խումբը պետք է ապահովի այդ իրավիճակներից հետո Բորսայի ընթացիկ գործունեության վերականգնողական աշխատանքները, մասնավորապես՝
 - ա) հնարավորինս կարճ ժամանակահատվածում պետք է վերականգնվեն (էվակուացման դեպքում հետ տեղափոխվեն) կարևոր փաստաթղթերը, վնասված սարքավորումները, պատրաստված կրկնօրինակները և այլ անհրաժեշտ պարագաները,
 - բ) եթե արտակարգ իրավիճակի ընթացքում լիովին վնասվել է Բորսայի տարածքը, սարքավորումները, սերվերները, համակարգիչները և այլ իրեր, ապա հնարավորինս կարճ ժամանակահատվածում պետք է ապահովվել դրանց փոխարինումը՝ ձեռք բերման կամ վարձակալման ճանապարհով,
 - գ) էլեկտրաէներգիայի խափանման վերականգնումից հետո պետք է անցում կատարվի սույն կարգի 4-րդ գլխի 11) կետում նշված պահուստային էլեկտրասնուցման համակարգից հիմնական էլեկտրասնուցման համակարգին,
 - դ) սույն կարգի 4-րդ գլխի 12) կետում նշված անձանց գործունեության ընթացքում պետք է կազմակերպվել նոր աշխատողների ընտրություն և աշխատանքի ընդունում,

- ե) Բորսայում սերվերների և ներքին ցանցի վերականգնումը կատարվում է սույն կարգի 5-րդ գլխի 6) - 9) կետերի համաձայն:
- 2) Վերականգման այլ միջոցառումներն իրականացվում են Խմբի ղեկավարի կողմից որոշված կարգով և ձևով:

Գլուխ 8. Պատասխանատվության շրջանակները

- 1) Արտակարգ իրավիճակի ի հայտ գալու դեպքում Բորսայի յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է գործել սույն կարգով սահմանված սկզբունքներով:
- 2) Բորսայի տնօրենը պատասխանատու է սույն կարգով սահմանված միջոցառումների կազմակերպման և իրականացման համար:
- 3) Բորսայի տնօրենի կողմից նշանակված Խմբի անդամներն արտակարգ իրավիճակի ժամանակ պետք է լինեն հասանելի և շատ կարճ ժամանակի ընթացքում ներկայանան Բորսայի տնօրենի կողմից նշանակված վայր:
- 4) Արտակարգ իրավիճակի (ինչպես նաև ծայրահեղ իրավիճակի) ժամանակ Բորսայի բոլոր աշխատակիցները պարտավոր են կատարել Խմբի ղեկավարի ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հրահանգները:
- 5) Բորսայի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պարտավոր են իրենց ենթակայության տակ գտնվող աշխատակիցներին (ինչպես արդեն աշխատող, այնպես էլ նոր ընդունված) իրազեկել սույն կարգի սկզբունքներին և իրականացվող միջոցառումներին, ինչպես նաև սույն կարգում կատարվող յուրաքանչյուր փոփոխությանը:
- 6) Բորսայի աշխատակիցները պարտավոր են պատշաճ կերպով ծանոթանալ սույն կարգին և կատարել դրանով սահմանված միջոցառումները:

Գլուխ 9. Այլ դրույթներ

- 1) Սույն կարգը հաստատվում է Բորսայի Դիտորդ խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահից:
- 2) Սույն կարգի յուրաքանչյուր փոփոխություն և լրացում հաստատվում է Բորսայի Դիտորդ խորհրդի կողմից, ուժի մեջ է մտնում ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահից և հանդիսանում է սույն կարգի անբաժանելի մասը:

Հաստատված է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Յոհան Ֆրեդիով**

«13» հունիսի 2008թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/107Լ